Արձանագրություն N 3

<<ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1>> ծածկագրով Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան	04.06.2019թ. Ժամը 09:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ՝	Ռ. Եղիազարյան
	Գ. Գևորգյան
	Ֆ. Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Տ. Վասիլյան

Բացակայում էր՝

Հանձնաժողովի անդամ՝	Ա. Գրիգորյան

1. <<ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Ա. Միրզոյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝

- 29.03.2019թ. հարցում է ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Արհովշին>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

- 29.03.2019թ. ծանուցվել է Մասնակցին երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղեկցող գրությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացնել հայտի ապահովման՝ բանկային երաշխիքի բնօրինակը և էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք Կարգի 32-րդ

կետի 22-րդ ենթակետի համաձայն՝ պետք է ուսումնասիրվեին փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում:

Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են հայտի ապահովման՝ բանկային երաշխիքի բնօրինակը և որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

բ) Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ, որոնց մասին 11.04.2019թ. Կարգի 47-րդ կետի համաձայն ծանուցվել է Մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք:

Արձանագրված անհամապատասխանությունների շտկումը գնահատելու համար գնահատող հանձնաժողովը որոշել է հաջորդ նիստը հրավիրել 15.04.2019թ.:

Մասնակցի կողմից սահմանված ժամկետում (12.04.2019թ. դրությամբ) որպես անհամապատասխանությունների շտկում ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը, որոնք ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը որոշել է կասեցնել 15.04.2019թ. նիստը և հաջորդ նիստը հրավիրել 17.04.2019թ.: Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքները ներկայացվում են ստորև.

Հ/Հ	Արձանագրված անհամապատասխանության նկարագրություն	Արձանագրված անհամապատասխանության ուղղում
ա)	Հավելված 5.1-ի աղյուսակում մասնակիցը լրացրել է <<ամբարձիչ>>, սակայն վարձակալության պայմանագրում և տեխնիկական վկայագրում նշված է <<բարձիչ>>, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջին: Նույն տողում լրացված չէ նաև պետհամարանիշը:	Ներկայացվել է ամբարձիչի վարձակալության նոր պայմանագիր, սակայն չի ներկայացվել, հրավերի 5.1 հավելվածի շտկված տարբերակը:
բ)	**Երևան քաղաքի Արշակունյաց պողոտա, Շիրակի փողոց և Արտաշատի խճուղի ճանապարհահատվածի սպասարկման շինարարական աշխատանքները** (ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/12, 03.11.2017թ), **Հրազդան քաղաքի փողոցների կապիտալ վերանորոգման** (ԿՄՀՔ-ՊԸԱՇՁԲ-02/17, 01.06.2017թ), **Ջերմուկ համայնքում աջափնյա թաղամասի բակային տարածքների բարեկարգման և բակային ճանապարհների ասֆալտապատման, եզրաքարերի տեղադրման** (ՋՀԲՄ-ԱՇՁԲ-2017/2, 23.09.2017թ) աշխատանքներն իրենց բնույթով չեն համապատասխանում հրավերի պահանջով ներկայացված գործունեության լիցենզիաների տեսակներին, ինչպես նաև ավարտված աշխատանքներն ընդունող հանձնաժողովների ակտերը բացակայում են, որոնք պետք է հավաստեն պայմանագրով նախատեսված աշխատանքներն (պարտավորությունները կատարված) ամբողջությամբ ընդունված լինելու	Մասնակցի կողմից ***ներկայացվել են*** - նշված 3 պայմանագրերի մասով բացակայող երկկողմանի հաստատված հարկային հաշիվները, - N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/12 (03.11.2017թ.) պայմանագրի մասով 5-րդ կատարողականի (1070002 ՀՀ դրամի) հանձնման-ընդունման արձանագրությունը, - N ԿՄՀՔ-ՊԸԱՇՁԲ-02/17 (01.06.2017թ.) պայմանագրի մասով Ծավալաթերթ-նախահաշիվը (Հավելված 1) և երկկողմանի հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունները: Մասնակցի կողմից ***չեն ներկայացվել*** - նշված 3 պայմանագրերի մասով ավարտված աշխատանքներն ընդունող հանձնաժողովների ակտերը, - N ՋՀԲՄ-ԱՇՁԲ-2017/2 (23.09.2017թ.) պայմանագրի մասով նորից ներկայացվել է դատարկ Հավելված 5-ը,

	մասին (ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշում): Բացի այդ՝ - N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/12 (03.11.2017թ.) պայմանագրի մասով 11.12.2017թ. դուրս գրված Ա2836435719 և 23.10.2018թ. դուրս գրված Ա2839892670 հարկային հաշիվները հաստատված են միակողմանի, ինպես նաև բացակայում է 5-րդ կատարողականի (1070002 ՀՀ դրամի) հանձնման-ընդունման արձանագրությունը: - N ՋՀԲՄ-ԱՇՁԲ-2017/2 (23.09.2017թ.) պայմանագրի մասով 27.09.2018թ. դուրս գրված Ա8146820513 հարկային հաշիվը հաստատված է միակողմանի, ինպես նաև բացակայում է պայմանագրի 8.13 կետով պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 5-ը: - N ԿՄՀՔ-ՊԸԱՇՁԲ-02/17 (01.06.2017թ.) պայմանագրում բացակայում են Ծավալաթերթ-նախահաշիվը (Հավելված 1), ինչպես նաև Հավելվածներ 4-ի և 4.1-ի օրինակելի ձևերը և երկկողմանի հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունները:	- N ԿՄՀՔ-ՊԸԱՇՁԲ-02/17 (01.06.2017թ.) պայմանագրի մասով Հավելվածներ 4-ի և 4.1-ի օրինակելի ձևերը:
գ)	**Ջերմուկ համայնքում ճախափնյա թաղամասի բնակելի շենքերի տանիքածածկույթի շինվերանորոգման աշխատանքներն** (ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/1, 12.04.2018թ) իրականացվել են օրացուցային գրաֆիկով սահմանված 01.10.2018թ վերջնաժամկետի էական խախտումներով՝ ավելի քան 60 օրացուցային օր երկարաձգմամբ (03.12.2018թ), բացակայում է ավարտված աշխատանքներն ընդունող հանձնաժողովի ակտը, Բացի այդ՝ նշված պայմանագրի մասով 24.07.2018թ. դուրս գրված Ա3715157073 և 24.09.2018թ. դուրս գրված Ա3325816032 հարկային հաշիվները հաստատված են միակողմանի, ինչպես նաև բացակայում է պայմանագրի 8.13 կետով պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 5-ը:	N ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/1 (12.04.2018թ.) պայմանագրի մասով ներկայացվել են բացակայող երկկողմանի հաստատված հարկային հաշիվները, ինչպես նաև նորից ներկայացվել է դատարկ Հավելված 5-ը:
դ)	**Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի ներքին կոյուղագծերի կառուցման և վերանորոգման աշխատանքերի** (ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/78, 21.04.2017թ)	

	տեխնիկական բնութագրում ներառված <Աշխատանքները պետք է իրականացվեն աշխատանքների թերության ակտով նախատեսված ծավալներին և ձևերին համապատասխան> ձևակերպումը բավարար հիմք է՝ նշված աշխատանքների բարդությունը ՀՀ կառավարության 19.03.2015թ. <ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին> թիվ 596-Ն որոշմամբ ամրագրված պահանջով՝ որպես ցածր ռիսկայնության օբյեկտ դասակարգելու համար: Ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) օբյեկտների թվին են դասվում շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման, տարածքների բարեկարգման և այլ փոքրածավալ շինարարական աշխատանքները, որոնք կարող են իրականացվել կառուցապատողի կողմից՝ առանց նախագծման և շինարարության թույլտվությունների, իսկ <Լիցենզավորման մասին> ՀՀ օրենքով նշված աշխատանքների համար լիցենզիա չի պահանջվում:	

Մասնակցի կողմից լրացուցիչ ներկայացվել են նաև նախկինում կատարված այլ պայմանագրեր, մասնավորապես՝

1. **Երևանի Ավան վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքների** (ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/40-1, 15.03.2018թ.) և **Երևանի Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքների** (ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/40-3, 15.03.2018թ.) պայմանագրերը, որոնց շրջանակներում իրականացված աշխատանքները համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշման՝ իրենց բարդությամբ համարվում են ցածր ռիսկայնության աշխատանքներ և դրանք իրականացնելու համար (համաձայն <Լիցենզավորման մասին> ՀՀ օրենքի) քաղաքաշինության բնագավառում շինարարական աշխատանքների իրականացման լիցենզիա չի պահանջվում:

2. **ՀՀ Արարատի մարզի Նոր Խարբերդ գյուղի թիվ 2 դպրոցի կառուցման շինարարական աշխատանքների** (N1, 03.12.2018թ.) ենթակապալի պայմանագիրը, որի մասով բացակայում են հրավերով պահանջվող հաշիվ-ապրանքագրերի պատճենները:

3. **Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Հ. Հովհաննիսյան փողոցի <<Կարմիր Բլուր>> հնավայրի հարակից այգու տարածքում մինի ֆուտբոլի դաշտի կառուցման աշխատանքների** (N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/1, 17.08.2017թ.) պայմանագիրը, որի մասով բացակայում են հրավերով պահանջվող հաշիվ-ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև պայմանագրի

սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

4. Արաբկիր վարչական շրջանի Վահագն Դավթյանի անվան զբոսայգու գետնանցման վերանորոգման աշխատանքների (N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/76, 21.04.2017թ.) պայմանագիրը, որի մասով բացակայում է պայմանագրի 8.12 կետով պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված N2-ը (օրացուցային գրաֆիկը), որի արդյունքում պայմանագիրը գնահատվել է անբավարար:

1.2 Սույն արձանագրության 1.1 կետի բ) ենթակետում ներկայացված ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ մասնակցի կողմից ներկայացված

(ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/12, 03.11.2017թ – 19 999 920 ՀՀ դրամ),
(ԿՄՀՔ-ՊԲԱՇՁԲ-02/17, 01.06.2017թ- 17 892 000 ՀՀ դրամ),
(ՋՀԲՄ-ԱՇՁԲ-2017/2, 23.09.2017թ- 147 000 000 ՀՀ դրամ),
(ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/1, 12.04.2018թ- 267 600 000 ՀՀ դրամ),
(ԵՔ-ԲԲԱՇՁԲ-17/78, 21.04.2017թ- 3 145 935 ՀՀ դրամ),
(ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/40-1, 15.03.2018թ.- 62 899 800 ՀՀ դրամ),
(ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/40-3, 15.03.2018թ.- 46 669 800 ՀՀ դրամ)
(N1 ենթակապալի պայմանագիր, 03.12.2018թ.- 145 806 540 ՀՀ դրամ)
(N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/1, 17.08.2017թ.- 9 499 800 ՀՀ դրամ)

պայմանագրերը չեն գնահատվում որպես նախկինում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագրեր:

Այսպիսով գնահատող հանձնաժողովը որոշում է, որ ներկայացված պայմանագրերի շրջանակներում Մասնակիցը չի համապատասխանում Կարգի 61-րդ կետով սահմանվող <<մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշին:

1.3 Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի և գնահատման թերթիկների համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է Մասնակցի հայտը մերժել և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. Կոմիտե ներկայացված հարցման և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ա. Միրզոյան)

2.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝

- 17.04.2019թ. հարցում է ուղարկվել Կոմիտե գնման ընթացակարգի հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Գազկոմշին>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների

գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

- 17.04.2019թ. ծանուցվել է ընկերությանը երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղեկցող գրությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացնել հայտի ապահովման՝ բանկային երաշխիքի բնօրինակը և էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք Կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետի համաձայն՝ պետք է ուսումնասիրվեին փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում:

Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են հայտի ապահովման՝ բանկային երաշխիքի բնօրինակը և որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

բ) Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ. նիստի արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները,

1) Բացակայում են Մասնակցի ներկայացրած **Հայաստանի հանրային հեռուստաընկերության գլխավոր մասնաշենքի տանիքի վերակառուցման աշխատանքների** 23.09.2016թ. կնքված ենթակապալի պայմանագրի

ա) 6.3 կետում նշված համապատասխան կազմակերպությունների կողմից համաձայնեցված նախագծանախահաշվային փաստաթղթերը (ներկայացված Ծավալաթերթ-նախահաշվից չի երևում, որ այն հանդիսանում է 23.09.2016թ. կնքված ենթակապալի պայմանագրի մաս),

բ) 02.11.2016թ. կնքված փոփոխություն N 1-ով նախատեսված ավելացված գումարի մասով կատարվելիք աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվը (ներկայացված փոփոխված ծավալների վերաբերյալ ծավալաթերթ-նախահաշվից չի երևում, որ այն հանդիսանում է պայմանագրի 02.11.2016թ. կնքված փոփոխություն N 1-ով նախատեսված ավելացված գումարի մասով կատարվելիք աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվը):

2) Բացակայում է Մասնակցի ներկայացրած **Երևան Գ. Հովսեփյան 26 հասցեում գտնվող <<Հայաստանի հանրային հեռուստաընկերություն>> ՓԲԸ գլխավոր մասնաշենքի արտաքին սանդուղքների կապիտալ վերակառուցման, վերանորոգման աշխատանքների և <<Երևան>> ստուդիա մասնաշենքի վթարային հատվածի քանդման, կից երեքհարկանի աստիճանավանդակի կառուցման, չվերանորոգված հատվածի ընթացիկ վերանորոգման,** ինչպես նաև համաձայնագրով ավելացված **<<Ճաշարան>> մասնաշենքի մի հատվածի քանդման աշխատանքների** (25.02.2016թ. N ՀՀՀ-ԲԸԱՇՁԲ-16/2) պայմանագրի շրջանակներում <<Ճաշարան>> մասնաշենքի մասով պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

գ) Կարգի 47-րդ կետի համաձայն՝ արձանագրված անհամապատասխանությունների մասին 02.05.2019թ. ծանուցվել է Ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք:

Արձանագրված անհամապատասխանությունների շտկումը գնահատելու համար գնահատող հանձնաժողովը որոշել է հաջորդ նիստը հրավիրել 06.05.2019թ.:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. <<ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1>> ծածկագրով գնման գործընթացը կասեցնելու և հանձնաժողովի նիստը տեղափոխելու մասին

(Ա. Միրզոյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 03.05.2019թ. ներկայացված գրությունը (<<Արհովշին>> ՍՊԸ-ի բողոքի վերաբերյալ) և ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 51-րդ հոդվածի 1-ին կետով՝ գնահատող հանձաժողովը 03.05.2019թ. հրավիրել է նիստ, որի արդյունքում որոշել է կասեցնել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնման գործընթացը, չեղյալ համարել սույն արձանագրության 2.1 կետի գ) ենթակետում նշված <<06.05.2019թ.>> բառերը և հաջորդ նիստը հրավիրել բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշումն ուժի մեջ մտնելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

4. <<ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1>> ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը շտկելու մասին

(Ա. Միրզոյան)

4.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) Բողոքներ քննող անձի կողմից 30.05.2019թ. հրապարակվել է 27.05.2019թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/22 որոշումը <<Արհովշին>> ՍՊԸ-ի բողոքն ամբողջությամբ մերժելու մասին,

բ) <<Գազկոմշին>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում (02.05.2019թ. դրությամբ) շտկվել են որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները, ինչպես նաև լրացուցիչ ներկայացվել են նախկինում կատարված այլ պայմանագրեր, որոնք հանձնաժողովի կողմից գնահատվել են որպես հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

5. <<ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Միրզոյան)

5.1 Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի և գնահատման թերթիկների համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<Գազկոմշին>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

6. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Միրզոյան)

6.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 5-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 5.1 կետում նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:

7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Միրզոյան)

7.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Միրզոյան

Անդամ՝ ---------- Ռ. Եղիազարյան

---------- Գ. Գևորգյան

---------- Ֆ. Սարգսյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան